

Գլենդեյլի քաղաքապետարան



ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Գլենդեյլի քաղաքապետարանը ստեղծել է երկու դրամաշնորհներ՝ օգնելու փոքր բիզնեսներին, որոնք COVID-19-ի պատճառով դժվար իրավիճակում են հայտնվել

Ընդհանուր տեղեկություններ դրամաշնորհի մասին

- Դիմումի ժամանակահատված՝ 2020 թ. հուլիսի 1-ի ժ. 12 :00 -ից մինչև 2020 թ. հուլիսի 15-ը, ժ. 12:00:
- Դրամաշնորհի գումարը՝ \$5,000:
- Բիզնեսը կարող է դիմել միայն դրամաշնորհներից մեկի համար, այլապես՝ որակագրկման վտանգի կարող է ենթարկվել:
- Բիզնեսը պետք է տեղակայված լինի Գլենդեյլում՝ առևտրային օգտագործման համար նշանակված տարածքում:
- Դիմումի պահին բիզնեսը չի ստացել որևէ դաշնային ֆինանսավորում՝ COVID-19-ի համար Տե՛ս հակառակ կողմը՝ յուրաքանչյուր դրամաշնորհի վերաբերյալ հատուկ մանրամասների համար:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

- Սյցելե՛ք GlendaleCA.gov/SmallBusinessGrants՝ ծրագրի ամբողջական մանրամասների և առցանց դիմելու համար:
- Վիճակախաղը տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 20-ին: Ընտրված դիմորդներն անմիջապես կտեղեկացվեն:

ԿԱՊՎԵՔ ՄԵԶ ՀԵՏ

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (818) 548-2067 կամ՝ էլ. նամակ ուղարկել հետևյալ հասցեով՝ smallbusinessgrant@glendaleca.gov



Փոքր բիզնեսի դրամաշնորհային ծրագիրը Գլենդեյլի քաղաքապետարանի նախաձեռնությունն է: Կապվեք մեզ հետ՝ @MyGlendale և @ChooseGlendale: #OurGlendale

ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

Բիզնեսը պետք է համապատասխանի սույն թերթիկի հակառակ կողմում նշված բոլոր պահանջներին, ինչպես նաև՝

- Պետք է ունենա 500 կամ ավելի քիչ աշխատող:
- 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ պետք է առնվազն 6 ամիս գործունեություն ծավալած լինի:
- Բիզնեսի բոլոր տեսակներն իրավասու են դիմել (բացառությամբ՝ վարկային կազմակերպությունների և մոլի խաղերի հետ կապված բիզնեսների, ի թիվս սահմանված այլ արգելված բիզնեսների):
- Ոչ առևտրային կազմակերպություններն իրավասու են դիմել (բացառությամբ՝ պաշտամունքի վայրերի):

ՑԱԾՐ ԵԿԱՄՏՈՎ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

Բիզնեսը պետք է համապատասխանի սույն թերթիկի հակառակ կողմում նշված բոլոր պահանջներին, ինչպես նաև՝

- Պետք է ունենա 25 կամ ավելի քիչ աշխատող:
- 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ պետք է առնվազն մեկ տարի գործունեություն ծավալած լինի:
- Բիզնեսը ռեստորան է կամ սահմանված է որպես «ոչ էական» բիզնես՝ ըստ «Տանն ավելի ապահով է» հրամանի սահմանափակումների, ներառյալ՝ բարեր, բուլինգի սրահներ, կանացի և տղամարդկանց գեղեցկության սրահներ, մանրածախ խանութներ, եղունգների խնամքի սրահներ, մարզասրահներ կամ ֆիթնես կենտրոններ և սպա կենտրոններ:
- Դիմորդը պետք է լինի Միացյալ Նահանգների օրինական բնակիչ:
- Աշխատակիցների 51%-ը (գործատուները կարող են ներառել նաև իրենց), պետք է լինեն ՑԱԾՐ-ՉԱՓԱՎՈՐ ԵԿԱՄՈՒՏ ունեցողներ: Տե՛ս ներքևի գծապատկերը՝ եկամտի չափի համար:

2019թ. եկամտի դասակարգում	1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	5 անձ	6 անձ	7 անձ	8 անձ
Ցածր եկամուտ (80%AMI)	\$ 58,450	\$ 66,800	\$ 75,150	\$ 83,500	\$ 90,200	\$ 96,900	\$ 103,550	\$ 110,250